

ԿՐԿՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ Վ.ՀԱԿՈԲՅԱՆԻ ՊՈԵԶԻԱՅՈՒՄ

Կրկնաբերությունը բանաստեղծական արվեստի կարևորագույն արտահայտչական միջոցներից է, որի դեպքում միևնույն բառը, բառակապակցությունն ասվում է երկու կամ ավելի անգամ՝ խոսքը տպավորիչ ու արտահայտիչ դարձնելու նպատակով:¹ Արտահայտչական այս հնարանքը գալիս է շատ հինուց և հատուկ է առանձնապես ժողովրդական բանավոր ստեղծագործությանը: Այն չափածո ստեղծագործության մեջ դրսևորվում է տարբեր ձևերով և կատարում տարբեր գեղարվեստական գործառույթներ: Սովորաբար արվեստագետը կրկնաբերությանը դիմում է այն ժամանակ, երբ հատկապես անհրաժեշտ է գտնում շեշտել այս կամ այն մտքի կարևորությունը, արտահայտել իր հուզական, զգացմունքային վերաբերմունքը պատկերվող երևույթի նկատմամբ: Կարելի է նշել, որ արտահայտչական սույն միջոցին դիմում են առավելապես նրանք, ովքեր շատ են կապված ժողովրդական ստեղծագործության հետ և սնվում են նրա ակունքներից: Վ. Հակոբյանը պատկանում է արվեստագետների այս խմբին, որով էլ բացատրվում է կրկնաբերության հաճախակի գործածությունը նրա ստեղծագործություններում: Վ.Հակոբյանի պոեզիայում հանդիպում են կառուցվածքային կրկնաբերության գրեթե բոլոր տեսակները՝ կրկնություններ հարևան տների կամ տողերի սկզբում /հարակրկնություն/ և վերջում /վերջույթ/, բանաստեղծությունը շրջանակող համանման տներ կամ տունը շրջանակող համանման տողեր, ռիթմական-շարահյուսական զուգահեռներ և այլն:

Վարդան Հակոբյանի պոեզիայում կրկնաբերության տարբեր տեսակներից ամենակենսունակը հարակրկնությունն է, որն ընդհանուր առմամբ կարող է օժտված լինել տարբեր արտահայտչական դերով: Ահա ընթերցում ենք՝

Բացվեցին կրկին կոպերն անարցունք,
յոթ օր - յոթ գիշեր էլ չփակվեցին,
որ զույգ աչքերի
զույգ երկինքները
Առանի ճամփին լույսը բաց պահեն,
Առանի ձեռքին սուրը բաց պահեն,
Առանի սրտում սերը բորբ պահեն
ու հայոց երկրի
Սերը սուրբ պահեն Առանի սրտում:
Ու ելան երկրի քարերը *հայոց*,
Ու ելան երկրի ծառերը *հայոց*,
Ու ելան երկրի լեռները *հայոց*,
կռիվ գնացին... /1,351/

«Տաճարն Աստծո» պոեմից բերված հատվածում տեսնում ենք բառակրկնությունների մի երանգավոր փունջ: Հարակրկնված տարրերը՝ բառերն ու կապակցությունները, զուգակցված համահունչ անվանական կապակցություններով ստեղծված ներքին ու արտաքին հանգերի հետ, ուժեղացնում են զուգահեռ անդամների ամբողջությամբ արտահայտված բանաստեղծական միտքը՝ Սաթենիկի սպասումները հայրենանվեր սիրեցյալի ճանապարհին:

Հարակրկնության ռիթմական և հուզական դերի առումով ցայտուն օրինակ է «Երբ վանք են մտնում» բանաստեղծությունը:

Երբ վանք են մտնում, մտնում են տաճար,
ուրեմն՝ Աստծուց լսելիք ունեն,
ուրեմն՝ Աստծուն ասելիք ունեն,
ուրեմն՝ լույսը դեռ բաց է մնում,
ուրեմն՝ հույսը դեռ հաց է մնում,
և ոգու կանչ է դողանքը զանգի: /1,43/

Ուրեմն մակաբերական շաղկապի պարբերական կրկնությունը շեշտում ու զգալ է տալիս ասվելիք բուն նյութը՝ ընդգծելով ինքնամաքրման հասնելու բանաստեղծի ձգտումը: Նեցուկ ունենալով քողարկված խորը հանգերը /ասելիք-լսելիք, լույսը-հույսը, բաց-հաց/՝ հարակրկնված տարրը խոսքը դարձնում է բանաստեղծական տեսակետից կառուցիկ ու հնչեղ և կարգավորում ոտքերի համաչափ ու ներդաշնակ շարժումը:

Վ. Հակոբյանի պոեզիայում շատ են այն հարակրկնությունները, երբ հարակրկնված տողերը լիակատար նույնություն չեն կազմում, այլ տողամիջի որոշ համահունչ տարրերով փոխեփոխ՝ ստեղծում են ներքին հանգակցություն: Ահա մեր դատողության բնագրային լավագույն հավաստիքը.

Ես իմ լուրջան դուռը բացում եմ ու ներս եմ մտնում...
Հետո ծառերը ողջ աշխարհով մեկ որոնում են ինձ,
Հետո սարերը ողջ աշխարհով մեկ որոնում են ինձ,
Հետո բառերը ողջ աշխարհով մեկ որոնում են ինձ,
Ու որոնման մեջ ես մոտենում եմ իմ իսկ պատկերին:

Ես իմ երազի դուռը բացում եմ ու ներս եմ մտնում...
Հետո ժայռերը փնտրում են սրտեր, որ վեր բարձրանան,
Հետո գետերը փնտրում են հուններ, որ վեր բարձրանան,
Հետո խաչերը փնտրում են վանքեր, որ վեր բարձրանան,
ու մաքառման մեջ ես մոտենում եմ իմ իսկ պատկերին: /1,51/

Բանաստեղծի՝ դարերի խորքից եկող ցավը շարունակվում է ներկայի մեջ, բայց նա չի հուսահատվում, լավատեսությունը չի լքում նրան, և երբ ձգտում է ինքնանկարի փորձ անել, աշխարհն ու կյանքը թևեր են տալիս, և նա «մաքառման մեջ» երազի, հույսի ու հավատի դռներով մոտենում է իր

պատկերին: Հարակրկնված տողերը որոշակի փոփոխություններով ուժեղացնում են քննարական հերոսին կլանած նպատակի զգացողությունը:

Վ. Հակոբյանի բանաստեղծական խոսքը հատուկ զգայական երանգ է ստանում, երբ իբրև կրկնության միավորներ հանդես են գալիս շաղկապները, դերանունները, մակբայներն ու երանգավորող բառերը: Սրանց մեջ հատկապես առանձնանում են և շաղկապով ստեղծված հարակրկնությունները, որոնք ուղղակի ոճակերտիչ դեր են կատարում և դառնում բանաստեղծի տաղանդի անհատականության էական հատկանիշը: Օրինակ՝

Այստեղ քարերն էլ հասցե են ու գիր.
և ճամփաներ են ծորում արյունից,
և քայլը սիրո նշան է հողին,
և աչքում տուն կա՝ ո՞նց կապվի կոպը,
և լեռը երկնին պարզված բռնոցք է:

Ճամփա է կտրում աչքը վերստին.
և մանանա է հողը սրբազան,
և ընծյուղվում է օրը տաք սրտից,
և ամեն մկան լարված ձգան է,
և չի վրիպում նիզակը Հայկի:

«Այստեղ քարերն էլ» բանաստեղծության մեջ /կազմված չորս բանատնից/ նկատվում է շարժման անընդհատություն, որին նպաստում է հարակրկնված և շաղկապը: Վերջինս ուրույն արտահայտություն է տալիս դիմի հոգեբանական զգացողությանը և ստեղծում թեթև տողանցումների անվերջության պատրանք: Այդ անընդհատության ու անվերջության մեջ էլ զգացվում է տազնապ՝ կապված հայրենիքի անցյալի հետ, և հույս՝ կապված սուրբ հողից վերընծյուղված Հայկ Նահապետի նիզակի հետ:

Բառաքերականական ատաղծի նույնաձևություն պետք է դիտել տողավերջի ամբողջական բառերի, բառակապակցությունների, բանատների վերջին նախադասությունների կրկնությունը, որն ընդունված է կոչել վերջույթ /էպիֆոր²/: Ունենալով կրկնաբերության մյուս տեսակներին բնորոշ հատկանիշներ՝ վերջույթը չափածո խոսքում կատարում է այլ առանձնահատուկ դեր և՛ ապահովում է բանաստեղծական տողերի կամ տների հանգը:

Վերջույթի դրսևորումները Վ. Հակոբյանի պոեզիայում բազմազան են, առանձնապես տարածված երևույթ է բանատների վերջին նախադասությունների կրկնությունը: Այս առումով բավական հետաքրքիր օրինակ է «Հայոց լեզու» բանաստեղծությունը.

Խորտակվողի մեկնած ձեռքին ձեռք ես մեկնել,-
հայերեն է,

երամից ետ ընկած հավքի
թև²ն ես մտել
տարել մինչև հորիզոնը,-
հայերեն է,

երբ կարող ես հազար տարվա,
հազար դարու վերջի միջից
անքեն ժպտալ,-
հայերեն է,
երբ քայլելիս Քիրս-Սափսի
փայլ կա դեմքիդ,
ու մորմոք կա անմեկնելի,-
հայերեն է... /1,68/

երբ մայրենի բառի համար,
երբ մայրենի տառի համար
տակից քառսուն ջաղացքարի
կարող ես դու վեր համբառնալ,
անգամ շունչդ ու հոգիդ տալ,-
հայերեն է... /1,68/

Սիւնույն «Հայերեն է» նախադասությունը բանաստեղծի վերջույթն է, որը թեև բաղկացած է մեկ անդամից, սակայն գեղագիտական ներգործության մեծ ուժ է ստացել շնորհիվ այն բանի, որ ներկայացնում է համապատասխան պարբերությունների երկրորդ եզրը, այսինքն՝ ամբողջ «թվարկվող թեմային նյութի լարվածության լուծումը և անփոփիչ, ընդհանրացնող ու ավարտուն մասը»:³ Կրկնությանը համընթաց՝ թեմատիկ տարրի էությունը աստիճան առ աստիճան բացահայտվում է նորանոր կողմերով՝ իր հիմքում ունենալով այն գաղափարը, որ առանց մայրենի լեզվի իմաստագրվում է ամեն ինչ, և միայն մետրոպոլիտ հայերենն է, որ ամենուրեք գործում է հրաշքներ:

Վ. Հակոբյանի լեզվական արվեստի ուսումնասիրությունը ի հայտ է բերում բառակրկնության մի հետաքրքիր եղանակ ևս: Այս դեպքում հանդիպադրվում են ոչ թե նույնական տողեր, բառեր կամ բառակապակցություններ, այլ բառարմատներ: Սրանց կրկնությամբ հեղինակը երաժշտական յուրօրինակ բազմածայնություն է հաղորդում բանաստեղծությանը, ստեղծում նմանաձայն տարրերից բաղադրված թարմ ու դիպուկ մակդիրներ /հիմնականում հեղինակային/ և դրանցով բնութագրում մերթ Սաթենիկ կույսին /եվ անասելի գեղեցիկ էր նա՝ իր հմայքներով մարմնամարմանդ, մարմնամոմիկ, մարմնածոմիկ, մարմնադողիկ, մարմնաշողիկ, մարմնապաղիկ, մարմնածափիկ, մարմնամեղմիկ, մարմնածեղիկ, մարմնագեղիկ, մարմնամեղիկ, մարմնամեղվիկ, մարմնամեղրիկ... /1,344//, մերթ Վաչագան թագավորի կնոջը՝ Անահիտին /Ու ձեռքերը Անահիտի՝ ծաղկահույս ու ծաղկափրփուր, ու իրանը Անահիտի՝

ծաղկացողուն ու *ծաղկահոտ*, խնկանվազ ու մեղեդի: /1,360//, մերթ սեփական ժողովրդին /*Աստվածասիրտ*: *Աստվածասեր*: *Աստվածամերժ*: *Աստվածալույս*: *Աստվածաշունչ*: *Աստվածաստեղծ*: *Աստվածալեռ*: *Աստվածավեհ*: *Աստվածալուռ*: *Աստվածալուր*: *Աստվածաղուռ*: Զրեշտակների ժողովուրդ: ժողովուրդ-Աստված: /1, 21// և այլն:

4. Հակոբյանի պոեզիայում հանդիպող կրկնաբերության հետաքրքրական եղանակ է համադրական և վերլուծական միավորների հանդիպադրումը տարբեր տողերում կամ տողամիջում ու վերջում՝ իբրև ներքին կամ արտաքին հանգիստություն: Սրա առանձնահատկությունն այն է, որ հաջորդականությամբ երկու-երեք բառ ռիթմական միությամբ մեկ այլ տեղ զուգորդվում են նույն կամ գրեթե նույն հնչյունախումբ ունեցող որևէ համադրական բառի կամ երկու բաղադրիչից կազմված բառական մեկ միության հետ՝ ստեղծելով բաղադրյալ հանգեր: Սեր խոսքը մասնավորենք «Իմ աստղատուն» բանաստեղծության մեջ գործածված օրինակներով.

*Աստղասեր ես
Աստղով սեր ես:
Աստղամայր ես,
Աստղով մայր ես:
Աստղահող ես,
Աստղով հող ես:
Իմ աստղատուն,
իմ աստղով տուն: /1, 71/*

Հնչյունակազմի չնչին փոփոխությամբ ստեղծված զուգորդությունները, հյուսված բառարմատի կրկնության հետ, խոսքին տալիս են ժողովրդական ախորժալուր մեղեդու հնչեղություն:

4. Հակոբյանի ոճին հարիր են առանձնապես շարահյուսական առանձին կառուցվածքների ինքնատիպ կրկնությունները, որոնք բնորոշ են հեղինակի բանաստեղծական մտածողությանը և նոր կողմերով են ներկայացնում լեզվական ոճը: Նրա պոեզիայում մենք տեսնում ենք մի շարք ստեղծագործություններին բնորոշ այն յուրահատկությունը, որ 4. Ժիրմունսկին բնութագրել է այսպես. «Շարահյուսական միասնությունը միաժամանակ հնչեքանգային միասնություն է, և շարահյուսական զուգահեռականությունը որոշակի ուղղություն է տալիս մեղեդու զարգացմանը»:⁴

Իրոք, շարահյուսական կառույցների կրկնությունը օգնում է ստեղծելու քեմայի, ոճի և արտահայտության այն ներքին միասնությունը, որի շնորհիվ չափածո երկը կամ նրա առանձին հատվածները սկզբից մինչև վերջ ընկալվում են իբրև մեկ ամբողջական և անբաժան տրամադրություն, գաղափարի

ավարտուն մարմնավորում: Պատահում են մասերի որոշ անկախություններկայացնող բազմանդամ ասույթներ, որոնց միավորներն ունեն շարահյուսական միևնույն հատկանիշները: Քննենք «Տաճարն Աստծո» պոեմից բերված հետևյալ պարբերությը.

... ասենք՝
էլ բավական է,
հերիք է,
թե տեսնել է՝ մեր աչքերով տեսնենք,
/ մի հավատացեք, երբ ասում են, թե
մենք ձեզ համար ենք տեսնում/
թե գալ է՝ մեր քայլերով գանք,
/ մի խաբվեք, երբ ասում են, թե
մեր ոտքերը ձեզ համար են քայլում/
թե մնալ է՝ մեր ոտքերով մնանք,
թե ծիծաղել է՝ մեր սրտով ծիծաղենք,
/մի կարծեք, թե ուրիշների
ծիծաղը մեր սրտից է գալիս/
թե ապրել է՝ մեր ցավերում ապրենք,
թե թոչել է՝ մեր երկնքով թոչենք,
թե թրջվել է՝ մեր ջրերում թրջվենք... /1, 323/

Բանաստեղծական խոսքի մեջ առանձնանում են պայմանահետևանքային հարաբերություն արտահայտող ստորոդաս և գերադաս մասերից բաղադրված յոթ բարդ նախադասություններ, որոնք ունեն միավորների բաշխման միևնույն տիպը, ստորոդայւնների նույն կազմությունը՝ դրանց եղանակաժամանակային որոշակի համաձայնությամբ: Նախ՝ դրվում են պայմանը բացահայտող կախյալ նախադասությունները /«թե տեսնել է...», «թե գալ է...», «թե մնալ է...», «թե ծիծաղել է...», «թե ապրել է...», « թե թոչել է...»/, ապա՝ դրանց առկայությամբ պայմանավորված գերադաս մասերը /« մեր աչքերով տեսնենք...», « մեր քայլերով գանք...» և այլն/: Քերականական ձևերի կրկնությունը, զուգորդվելով բաղադրիչների համապատասխան անդամների համահնչյունությամբ, խոսքը դարձնում է՝ առավել երաժշտական, սահուն ու թեթև՝ միաժամանակ կարևորելով բանաստեղծի՝ սեփական ուժերին ապավինելու պատգամ-խորհուրդը:

Հին ժամանակներից սկսած՝ բանահյուսության և գրավոր քնարերգության մեջ շատ տարածված է եղել բանաստեղծությունը կամ նրա մի մասը որոշակի շրջանակի մեջ դնելու հնարանքը, որն արտահայտվում է սկզբի տունը կամ տողը նաև վերջում կրկնելով:⁵ Այդ սկզբունքը լայնորեն կիրառվում է նաև ժամանակակից քնարերգության մեջ՝ հանդիսանալով բանաստեղծության հուզական բովանդակությունն ու երաժշտականությունն ուժեղացնելու կարևոր

միջոցներից մեկը: Վ. Հակոբյանի ոճին հատուկ են թե՛ բանաստեղծության օղակը, թե տան օղակը: Բավարարվենք՝ բերելով մեկ օրինակ "Երգ մաքառման" բանաստեղծությունից.

Տառապանքը խորանում է վայրկյաններով.

ճաքճքում է վատահոլության շուրթը պաղից,
ցամաքում է լճակը լուրթ լեռան ցավից,
բացվող օրը՝ փորձարկվող ռումբ, անլուր վախից
չոքել է և աղերսում է լույս, ամոքում...

Տառապանքը խորանում է վայրկյաններով: 11,571

Բանաստեղծությունը գրվել է արցախյան ազատագրական շարժման օրերին, երբ, կորցնելով հավատը «վերևների» նկատմամբ, մեմակ մնալով իր դաժան ճակատագրի հետ, արցախցին բացվող ամեն օր «լույս էր աղերսում», իսկ դրան հակառակ՝ «տառապանքը խորանում էր վայրկյաններով»: Նույն տողի կրկնությունը շեշտում, առաջին պլան է մղում բովանդակության էական տարրերը, ցուցադրում բանաստեղծական տրամադրության աստիճանական զարգացումը, դառնում ստեղծագործության ողնաշարը և հիմնական եզրակացությունը:

Գեղարվեստական խոսքում միշտ չէ, որ կրկնաբերության տեսակները հանդես են գալիս անխառն դրսևորումով, Վ. Հակոբյանի պոեզիայում՝ առավել ևս: Հաճախ նույն ստեղծագործության մեջ մեծ հաջողությամբ զուգորդվում են կառուցվածքային կրկնաբերության տարբեր տեսակները և անցնելով տողից տեղ՝ նոր վերլուծությունների տեղիք տալիս: Վերև ուսումնասիրված ստեղծագործությունները ասվածի լավագույն վկայություններն են:

Ամփոփելով կարող ենք նշել, որ Վ. Հակոբյանի պոեզիայում կրկնաբերության արվեստը հասել է բարձր վարպետության: Կրկնաբերություններն իրենց բազմազան ձևերով ինքնանպատակ չեն և միշտ կատարում են բովանդակային ու ռիթմական կարևորագույն դեր:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Տե՛ս, Գ. Բ. Զահուկյան, Ֆ. Հ. Խլղաթյան, Հայոց լեզվի ոճաբանություն, Եր., «Լույս» հրատ., 1988, էջ 40:
2. Տե՛ս, Վ. Առաքելյան, «Կրկնության արվեստի մի քանի առանձնահատկությունների մասին», Ս. Գ., Եր., 1969, հ.1, էջ 122:
3. Վ. Առաքելյան, նշվ. աշխտ., էջ 126:
4. Жирмунский В., Теория стиха, Л., 1975, с. 461.
5. Տե՛ս, Էդ. Ջրբաշյան, Վ. Տերյանի տաղաչափական համակարգը, Եր. 1995, էջ 130:

ՍԿԶԲԱՂԲՅՈՒՐ

1. Վ. Հակոբյան, Մենարան, Եր., Հմլս. հրատ., 1996: